ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ-ԿԱ-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ-4 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար դրոշմակնիքների և կնիքների ձեռքբերման գահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 29.04.2016թ. N 1/16-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 03.05.2016թ. ժամը 11-00-ին, ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում: Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Մ.Սարդարյանը, Ա.Մկրտումյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

-ՀՀ-ԿԱ-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ-4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ ՀՀ-ԿԱ-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ-4 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին մասնակցելու համար /29.04.2016թ. թիվ-1/18-2/13736-16 գրությամբ/ էլեկտրոնային ծանուցմամբ հրավեր էր ուղարկվել՝ Ա/Ձ «Արշակ Կիրակոսյան Փայլակի»-ին:
-ՀՀ-ԿԱ-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ-4 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
Ա/Ձ «Արշակ Կիրակոսյան Փայլակի» -ն (ք.Երևան, Արշակունյաց-5)
-քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:
-գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ Ա/Ձ «Արշակ Կիրակոսյան Փայլակի» -ի կողմից ներկայացված ՝
ա/ հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է հրավերով սահմանված կարգով.
բ/ բացված ծրարում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և դրանք կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան.

Մասնակցի կողմից առաջարկված գինը հետևյալն է.
Ա/Ձ «Արշակ Կիրակոսյան Փայլակի»

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը ՀՀ դրամ
1	Դրոշմակնիքներ	-	1445000
2	Կնիք	-	266000

*«Արշակ Կիրակոսյան Փայլակի»-ն ԱԱՀ վճարող չէ
-Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ա/Ձ «Արշակ Կիրակոսյան Փայլակի»-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը որոշեց՝
Ա/Ձ «Արշակ Կիրակոսյան Փայլակի»-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

-ՀՀ-ԿԱ-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ-4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ հրավերի պահանջներին բավարարող գնահատված հայտ ներկայացրած և նիստին ներկա Ա/Ձ «Արշակ Կիրակոսյան Փայլակի»-ի տնօրեն Ա.Կիրակոսյանին հրավիրեց մասնակցելու ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 74-րդ կետի 1-ին ենթակետի զ/ կետի պայմաններով բանակցությունների:

-Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին Ա/Ձ «Արշակ Կիրակոսյան Փայլակի»-ն ներկայացրած գնային առաջարկը թողեց անփոփոխ:

-գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1.Ներկայացված հայտի հիման վրա և հաշվի առնելով, որ հիշյալ գնման ընթացակարգին Ա/Ձ «Արշակ Կիրակոսյան Փայլակի»-ի կողմից հայտով ներկայացրած գները չեն գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը՝ Ա/Ձ «Արշակ Կիրակոսյան Փայլակի»-ին հայտարարել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

2. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հրավերի 2.1 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյան

Անդամներ՝ Մ.Սարդարյան

Ա.Մկրդումյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան